ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 510910, 8686

Ֆաքս՝(374 10) 538904

E-mail: bank@aeb.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 15, 30 հոկտեմբերի 2023թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) և արտոնյալ բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ սովորական բաժնետոմս՝ 10,008,550 արտոնյալ բաժնետոմս՝ 424,600

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ սովորական բաժնետոմս՝ 2,080 ՀՀ դրամ արտոնյալ բաժնետոմս՝ 15,000 ՀՀ դրամ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 31/01-27.10.23թ. որոշմամբ նախատեսվում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության 6.22 ժզ կետով Խորհրդին տրված իրավասության համաձայն՝ իրականացնել կանոնադրական կապիտալի համալրում 1,022,621,600 ՀՀ դրամ գումարի չափով:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 31/02-27.10.23թ. որոշմամբ նախատեսվում է թողարկել 491,645 հատ սովորական բաժնետոմս՝ 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով, տեղաբաշխել դրանք յուրաքանչյուրը 5,410 ՀՀ դրամ գնով: Տեղաբաշխվող բաժնետոմսերի ընդհանուր գումարային ծավալը (հաշվարկված մեկ բաժնետոմսը 2,080 ՀՀ դրամ անվանական արժեքով) կազմում է 1,022,621,600 ՀՀ դրամ, (մեկ բաժնետոմսը 5,410 ՀՀ դրամ շուկայական գնով հաշվարկած՝ 2,659,799,450 ՀՀ դրամ), որն ամբողջությամբ ենթակա է բաժանորդագրության:

Բաժնետոմսերի տեղաբաշխման սկիզբ համարել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից Ազդագրի գրանցման օրվան հաջորդող 45-րդ օրվա ժամը 09:00-ն, իսկ ավարտ՝ հաջորդ օրվա ժամը 16:00-ն: Մինչև նշված ժամկետը բաժնետոմսերի ամբողջ ծավալի բաժանորդագրության դեպքում Բանկը դադարեցնում է բաժանորդագրության գործընթացը:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ **ԱՐՏԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ**